Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) բարձրագույն կրթության միջազգայնացումը ժամանակակից պահանջների համաձայն բարձրորակ մասնագետների պատրաստման և հետազոտության զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Այն թելադրված է թե՛ արտաքին, և թե՛ ներքին հրամայականներով: Արդեն 15 տարի է, ինչ Հայաստանը միացել է Բոլոնիայի գործընթացին, որը կանխորոշել է բարձրագույն կրթության բարեփոխումների հիմնական ուղղությունները: Արդյունքում, ՀՀ Կառավարությունը և բարձրագույն ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ բուհեր) իրականացրել են կառուցվածքային և բովանդակային մի շարք բարեփոխումներ, որոնք ձևավորել են բարենպաստ պայմաններ բարձրագույն կրթության ազգային համակարգի համադրելիության, որակի ապահովման, որակավորումների ճանաչման, շարժունության խթանման համար:

Արդի գլոբալիզացիայի և բարձրագույն կրթության ոլորտում աճող մրցակցության պայմաններում հայկական բուհերը կանգնած են լուրջ մարտահրավերների առջև՝ կրթությունը և հետազոտությունը բարձրացնելու նոր մակարդակի, ցուցաբերելու ստեղծագործ մոտեցումներ, ներդնելու մարդկային ռեսուրսների կառավարման ճկուն մեխանիզմներ, ինչպես նաև խթանելու տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և նորարարությունը: Ավելին՝ տնտեսության բոլոր ոլորտներում թվայնացման բարձր տեմպերը առաջ են բերում որակավորված մասնագիտական ներուժի պահանջարկի ավելացում: Այսօր, առավել քան երբևէ, կարևորվում են գործարար կարողություններ ունեցող, ինքնուրույն և ստեղծագործաբար մտածող, բարդ տեղեկատվությունը կառավարող և արդյունավետ հաղորդակցության հմտություններ ունեցող մասնագետները: Գլոբալ զարգացումները և մարտահրավերները պահանջում են միջազգայնորեն մրցունակ կրթական ու հետազոտական միջավայրի ապահովում:

Սակայն, Հայաստանի բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման տեմպերը համահունչ չեն գլոբալիզացման միտումներին: Մասնավորապես առաջնահերթ կարևորություն են ստանում դասավանդման և հետազոտության որակի բարելավումը, միջազգային գործընկերությունների ստեղծումը և բուհերի միջազգային տեսանելիության բարձրացումը: Սակայն, դեռևս խոչընդոտներ կան կապված մուտքի արտոնագրերի, Հայաստանում աշխատանքային և ժամանակավոր կացության թույլտվությունների, որակավորումների փոխճանաչման հետ, որոնք պահանջում են առաջնահերթ լուծումներ:

Որո՞նք են ներկայումս Հայաստանի բարձրագույն կրթության միջազգայնացման ոլորտի ձեռքբերումները, խնդիրները և ինչպիսի՞ն են զարգացման դրական նախադրյալները:

Այսօր Հայաստանը էական առաջընթաց է արձանագրել որակավորումների ճանաչման հետ կապված մարտահրավերների հաղթահարման գործում՝ բարձրագույն կրթության համակարգի և Բոլոնիայի գործընթացին միացած երկրների կրթական համակարգերի հետ ներդաշնակեցման, ինչպես նաև 2005 թվականին Լիսաբոնի բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման կոնվենցիան վավերացնելու միջոցով: Հիմնականում ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի միջոցով բուհերի միջազգայնացման նախկին միտումներին եկել են փոխարինելու կրթության միջազգայնացման ռազմավարական դիրքորոշումները՝ օտարերկրյա ուսանողների և դասախոսների փորձի ներգրավման, ուսումնառության և դասավանդման գործընթացներում միջազգային չափայնության ներդրման և համալսարանական ռազմավարության ձևավորման ուղղությամբ: Եվրոպական միության /ԵՄ/ և առանձին երկրների կողմից իրականացվող, բուհերի միջազգայնացումը խթանող բազմաթիվ ծրագրեր, մասնավորապես Erasmus+, DAAD, IREX, Fullbright և այլն, լուրջ ներդրում են ունեցել բարձրագույն կրթության միջազգայնացման հարցում: Արդյունքում ձևավորվել է միջազգայնացմանը նպաստող մասնագետների և շահակիցների շրջանակ, որը նպատակաուղղված է առավել հավակնոտ ռազմավարական թիրախների սահմանմանը և իրագործմանը: 2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված «ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»-ը նոր հեռանկարներ է ստեղծում բուհական համակարգի զարգացման համար: Ավելին՝ Erasmus+ նոր ծրագիրը, ինչպես նաև ԵՄ վիզայի ազատականացմանը միտված գործընթացները ենթադրում են դյուրին շարժունություն, իսկ Հորիզոն-2020 ծրագիրը հնարավորություն է ընձեռում գլոբալ հետազոտական համայնքներին ինտեգրման և հետազոտության արդյունքների արտահանման համար:

Այդ տեսանկյունից Հայաստանի բարձրագույն կրթության համակարգն ունի կուտակված ներուժ և ոչ միայն հուսալի գործընկեր է օտարերկրյա բուհական համայնքների հետ համագործակցության համար, այլև ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ գործընթացներն արդյունավետ կառավարելու և իրագործելու: Հայկական սփյուռքի մասնագիտական ներուժը ևս դրական նախադրյալներ է ստեղծում բարձրագույն կրթության միջազգայնացման, գլոբալ գործընկերությունների ստեղծման և երկրի միջազգային տեսանելիության բարձրացման համար:

Գլոբալ մարտահրավերներին արձագանքելու և հայաստանյան բուհերի միջազգայնացման հարացույցը փոխելու նպատակով սույն ռազմավարությամբ նախատեսվում է թիրախային մի շարք ռազմավարական խնդիրների իրագործում, որոնք կնպաստեն Հայաստանի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին /ԵԲԿՏ/ ինտեգրմանը և իր առանձնահատուկ դիրքավորմանը՝ միջազգայնացման միջոցով տեսանելիության բարձրացման, կրթության և հետազոտության որակի բարելավման, նորարարությունների և միջգիտակարգային հետազոտությունների արդյունքների զարգացման կամ առևտրայնացման նպատակով:

2. Միջազգայնացման առկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը

Այսօր Հայաստանում գործում են 74 պետական բուհեր (ներառյալ՝ պետական բուհերի 14 մասնաճյուղեր), որոնցից 10-ը անդրազգային և արտերկրի բուհերի մասնաճյուղեր են, ինչպես նաև մասնավոր բուհեր:

Պետական, մասնավոր և անդրազգային բուհերի գործունեությունը կարգավորվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, միջազգային պայմանագրերով ու այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

Անդրազգային բուհերը ստեղծված են այլ պետությունների կամ օտարերկրյա բուհերի մասնակցությամբ, ուստի առավելություն ունեն հայաստանյան այլ բուհերի նկատմամբ ոչ միայն միջազգայնացման բարենպաստ պայմանների, այլև օտար լեզուներով ամբողջական ուսուցում կազմակերպելու առումով: Այս իմաստով անհավասար պայմանները չեն նպաստում ազգային և անդրազգային բուհերի միջև միջազգայնացման ոլորտում առողջ մրցակցությունը և բարձրագույն կրթության որակի և կրթական ծրագրերի մրցունակության համարժեք բարձրացմանը բուհերում:

Ուստի բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման ռազմավարության իրավական հենքի բարելավման հիմնական նպատակը պետք է լինի Հայաստանում գործող բոլոր բուհերի համար միջազգայնացման հավասար պայմանների ստեղծումը և միջազգայնացման խթանումը:

Հայաստանյան բուհերում 2017-2018 ուսումնական տարում սովորել են 90270 ուսանողներ, որոնց 3.8%-ը (3395) սփյուռքահայ և 3%-ը (2708) օտարերկրյա ուսանողներ: Նրանց հիմնականում հետաքրքրել են բժշկական, ճարտարապետության և շինարարության ոլորտների մասնագիտությունները:

3395 սփյուռքահայ ուսանողներից 2383-ը սովորել են ազգային, իսկ 1012-ը՝ անդրազգային բուհերում: Ամենամեծ թվով սփյուռքահայ ուսանողները եղել են Ռուսաստանի Դաշնությունից (1454), Վրաստանից (1209), Սիրիայից (536) և Իրանից (139):

Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերում սովորող 2708 օտարերկրյա ուսանողներից ամենամեծ թվով ուսանողներ սովորել են Հնդկաստանից (1142), Իրանից (430), Իրաքից (404) և Իսրայելից (118):

Այսօր տարբեր բուհերում սովորող սփյուռքահայ և օտարերկրյա ուսանողների տեսակարար կշիռը հասնում է առավելագույնը 12%-ի: Մինչդեռ մոնոէթնիկ Հայաստանում, կրթության որակի բարձրացման առումով խիստ կարևոր է բազմազան տեսակետների քննարկումները լսարանում և, այդ առումով, այլ երկրներից ուսանողների ներգրավումը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարությունը համագործակցում է աշխարհի շուրջ 30 երկրների հետ: Ընդ որում իրականացվում են տարբեր ծրագրեր Չինաստանի, Ռուսաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Չեխիայի, Սլովակիայի, Եգիպտոսի և այլ պետությունների հետ: Մասնավորապես իրականացվում է ուսանողների փոխանակում աստիճանաշնորհող կրթական ծրագրերի շրջանակում: Ամեն տարի ՀՀ Կառավարության կողմից սահմանվում է շուրջ 60 կրթաթոշակ օտարերկրյա ուսանողների, և 70 կրթաթոշակ սփյուռքահայ ուսանողների հայաստանյան բուհերում ուսումնառելու համար: 2017-2018թթ. ուսումնական տարում օտարերկրյա ուսանողներին տրամադրվող 60 կրթաթոշակից միայն 28 ուսանող է օգտվել, մնացած 32 տեղերը մնացել են թափուր: Մինչդեռ սփյուռքահայերի համար հատկացվող նպատակային կրթաթոշակների (հայագիտության, արվեստի և մանկավարժության մասնագիտություններով) համար մրցակցությունը մեծ է:

Միջպետական համաձայնագրերով, պայմանագրերով և փոխըմբռնման հուշագրերով նախատեսված տարբեր կրթական աստիճանների մրցույթներին մասնակցել և օտարերկրյա պետություններ (հիմնականում Ռուսաստանի Դաշնություն)

ուսումնառության են մեկնել 2015թ.-ին՝ 223, 2016թ.-ին՝ 239, 2017թ.-ին՝ 206 և 2018թ.-ին՝ 236 ուսանողներ:

2004-ից մինչև 2013 թվականները Erasmus Mundus ծրագրով սովորողների ընդհանուր թիվը եղել է ընդամենը 75: 2014 թվականից ԵՄ շարժունության ծրագիրը «Միջազգային կրեդիտային շարժունության ծրագիր» վերանվանվելուց հետո, համաձայն Erasmus+ ի տվյալների՝ ուսանողական և բուհական աշխատակազմի (դասախոսական և վարչական) շարժունությանը 2015թ.-ին մասնակցել են համապատասխանաբար՝ 205 և 162, 2016թ.-ին՝ 299 և 347, 2017թ.-ին՝ 397 և 491 ներկայացուցիչ:

Չնայած ձեռքբերումներին և բուհերի համակողմանի միջազգայնացման անհրաժեշտությանը՝ ոչ բոլոր բուհերն ունեն միջազգայնացման հստակ ռազմավարություն, համապատասխան, փոխլրացնող ենթակառուցվածքներ, միջազգայնորեն մրցունակ կրթական ծրագրեր և օտար լեզուներին տիրապետող դասախոսական ու վարչական անձնակազմ, տարբեր ստորաբաժանումների անձնակազմի ակտիվ ներգրավվածություն միջազգայնացմանը և կադրերի որակավորման բարձրացման ուղղությամբ ձեռնարկված քայլեր: Միևնույն ժամանակ երկրի ներսում թույլ է համագործակցությունը և փորձի փոխանակումը բուհերի միջև, հատկապես անդրազգային բուհերի հետ:

Ինչ վերաբերում է հայաստանյան և օտարերկրյա բուհերի միջև առկա համաձայնագրերին դրանք, չնայած առկա բազմազանությանը, գործնականում արդյունավետ չեն: Համագործակցության համաձայնագրերի շրջանակներում կարևորվում են ուսանողների, դասախոսների շարժունությունը, համատեղ հետազոտությունների իրագործումը և հոդվածների հրատարակումը, գիտական պարբերականներով փոխանակումը: Հայաստանի բուհերի համագործակցության համաձայնագրերի մեծ մասը ԱՊՀ բուհերի հետ է, սակայն ֆինանսական աջակցության սահմանափակության կամ կրթական համակարգերի խնդիրների անհամատեղելիության պատճառով գործնական համագործակցությունը սահմանափակ է:

Բարձրագույն կրթության և հետազոտության մրցունակության ու գրավչության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ ինչպես իրավական հենքի բարեփոխման, այնպես էլ ֆինանսական ներդրումների ավելացման և մարդկային ներուժի զարգացման ուղղությամբ:

3. Բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային ռազմավարության մշակման գործընթացը

Սույն ռազմավարությունը մշակվել է Erasmus+ «Հայաստանի բուհերի միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում» (”Boosting Strategy and Marketing for Internationalization of Armenian Universities”/BOOST) ծրագրի շրջանակներում: Կոնսորցիումի անդամ բուհերի կողմից կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, որոնց արդյունքում վերհանվել են միջազգայնացման ոլորտում առկա խնդիրները և խոչընդոտները, ուսումնասիրվել է օտարերկրյա բուհերի միջազգայնացման լավագույն փորձը, հստակեցվել են պետության համար միջազգայնացման թիրախային ուղղությունները և նպատակները: ԿԳՄՍ նախարարությունը՝ որպես կոնսորցիումի լիիրավ անդամ, իր առաջնորդող դերն է ունեցել բարձրագույն կրթության միջազգայնացման իրավիճակի վերլուծության և ռազմավարական նպատակների ու խնդիրների հստակեցման գործում:

Ռազմավարության զարգացման ընթացքում մշակվել է դրանից բխող կոնկրետ գործողությունների ծրագիր, որը ներկայացվում է կից:

4. Բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները

Բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման ռազմավարական ուղղություններն են՝

- ✓ բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային քաղաքականության ամբողջական շրջանակի հստակեցում,
- ✓ միջազգայնացման ինստիտուցիոնալ ռազմավարությունների ուղենիշների ապահովում,
- ✓ բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակի ձևավորում, համապատասխան գործիքակազմի և բենչմարքինգի ցուցիչների ստեղծում:

Վերոնշյալ ռազմավարական ուղղություններին հասնելու համար առանձնացվել են հետևյալ նպատակները՝

Նպատակ 1. Ձևավորել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացումը խթանող միջավայր

Նպատակ 2. Խթանել բարձրագույն կրթական ծրագրերի և հետազոտության մրցունակությունը միջազգային մակարդակում

Նպատակ 3. Բարձրացնել Հայաստանի բարձրագույն կրթության և հետազոտության միջազգային տեսանելիությունը և գրավչությունը

Նպատակ 4. Ընդլայնել ուսանողների, դասախոսական և վարչական աշխատակազմի միջազգային շարժունությունը

Նպատակ 1. Ձևավորել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացումը խթանող միջավայր

Բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման գործընթացի հաջողությունը ամենից առաջ պահանջում է համապատասխան պայմանների ապահովում և առկա խնդիրների լուծում:

Խնդիր 1.1 Բարելավել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման իրավական հենքը

Միջազգային համաձայնագրերով բարձրագույն կրթության համակարգը ԵԲԿՏ-ին ինտեգրելու Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրագործման համար հրամայական է ազգային մակարդակում օրենսդրական և իրավական դաշտի բարեփոխումների իրականացումը: Ներկայումս հայաստանյան բուհերը բախվում են մի շարք խոչընդոտների, որոնք պայմանավորված են այդ դաշտում առկա բացերով, ոչ ճկուն և զարգացման արդի միտումներին չհամապատասխանող կարգավորումներով:

Դրանք վերաբերում են օտար լեզվով կրթական ծրագրերի ներդրմանը, մուտքի արտոնագրերին, կացության և աշխատանքի թույլտվությանը և այլ հարցերի: «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում են համապատասխան կարգավորումներ այդ խնդիրների լուծումն ապահովելու համար: Սակայն անհրաժեշտ է նաև ենթաօրենսդրական մի շարք փաստաթղթերի վերանայում և երաշխավորությունների ձևով կարգավորումների ներդրում՝ բուհական հիմնական շահակիցների ներգրավմամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել բուհերի միջազգային գործունեության իրավական կարգավորման միասնական փաթեթ՝ հաշվի առնելով ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև միջազգային օրենսդրությանը Հայաստանի Հանրապետության անհրաժեշտ իրավական կարգավորումների և ընթացակարգերի համապատասխանեցման պահանջները: Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել բարձրագույն կրթության միջազգայնացման միջգերատեսչական հանձնախումբ:

Նոր լուծումներ պարունակող ճկուն իրավական դաշտի առկայությունը և ենթաօրենսդրական կարգավորումների ապահովումը կնպաստեն միջազգային չափայնության ներդրմանը կրթական ծրագրերում և հետազոտություններում: Դրանով իսկ այն կաջակցի բարձրագույն կրթության համակարգի շարունակական և կայուն զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով ստեղծելու միջմշակութային հաղորդակցության, փորձի և գաղափարների փոխանակման համար նպաստավոր միջավայր և հարթակ:

Խնդիր 1.2 Ներգրավել/ ապահովել հանրային և այլ ռեսուրսներ միջազգայնացումը խթանող միջավայրի ստեղծման գործում

Բարձրագույն կրթության զարգացմանը մասնակից շահակիցների գործունեության մասնատվածությունը և գործողությունների ոչ ներդաշնակ իրագործումը չի նպաստում համակարգի արդյունավետ զարգացմանը: Միևնույն ժամանակ ինստիտուցիոնալ մակարդակում ներգրավված մասնագետների ոչ բավարար հմտություններն ու կարողությունները, ինչպես նաև հիմնական դերակատարների կողմից միջազգայնացման գործընթացների թերընկալումը և ֆինանսավորման պակասը չեն ապահովում միջազգայնացման պատշաճ իրագործում տարբեր ուղղություններով: Անհրաժեշտ է խթանել երկխոսությունը բարձրագույն կրթության համակարգի տարբեր

դերակատարների՝ գերատեսչությունների, հետազոտական կառույցների, ուղեղային կենտրոնների, բուհերի միջև: Այս խնդիրների լուծումը պահանջում է համապարփակ և ռազմավարական մոտեցում ինչպես ազգային, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներում: Բարձրագույն կրթության միջազգայնացման՝ վերը նշված միջգերատեսչական հանձնախմբի ստեղծումը մեծապես կնպաստի արդյունավետ երկխոսության ծավալմանը:

Միևնույն ժամանակ բուհերի, կազմակերպությունների և տարբեր գերատեսչությունների փոխգործակցության ապահովմամբ տեխնոլոգիական, մտավոր և ֆինանսական ռեսուրսների համատեղ ներդրումը կնպաստի կրթական ծրագրերի որակի և մրցունակության բարձրացմանը:

Խնդիր 1.3 Ընդլայնել բուհերում օտարերկրյա (այդ թվում ափյուռքահայ) ուսանողների ուսումնառելու հնարավորությունները

Օտարերկրյա ուսանողների՝ Հայաստանում ուսումնառելու քիչ հետաքրքրվածության փաստը (ընդհանուր թվի մեջ 6.8 տոկոս) վկայում է այն մասին, որ Հայաստանի բարձրագույն կրթությունը գրավիչ չէ կամ պակաս գրավիչ է: Պատճառների շարքում կարելի է նշել՝

- օտար լեզուներով կրթական ծրագրերի սակավաթիվ լինելը և դրանց կազմակերպման ուղղությամբ խոչընդոտները,
- օտարերկրյա ուսանողների ընդունելության ընթացակարգերի անհամապատասխանությունը գլոբալ միտումներին (միջազգային ստանդարտացված քննություններ, առցանց ընդունելություն) և կրթական համակարգի զարգացումներին,
- բուհերի և դրանց կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության անբավարար և ոչ թիրախային տարածումը,
- հանրակացարանային անհրաժեշտ պայմանների բացակայությունը,
- կրթաթոշակների անհամարժեքությունը իրական կեցության ծախսերին,
- ուսանողների ֆինանսական և սոցիալական աջակցության համակարգի անկատարությունը,
- օտարերկրյա ուսանողների հայոց լեզվին չտիրապետելու հանգամանքը,
- Հայաստանի բնակչության էթնիկ միատարրությունը:

Վերը նշված հարցադրումներից կարևոր նախապայման և անհրաժեշտություն է օտար լեզուներով կրթական ծրագրերի ներդրումը և ծրագրերի բազմազանեցումը: Այսօր բուհերում առաջարկվող դասընթացների ընդհանուր թվի մեջ շատ փոքր է օտար լեզուներով դասընթացների տեսակարար կշիռը, և հիմնականում դրանք իրականացվում են անդրազգային բուհերի կողմից անգլերենով, ֆրանսերենով և ռուսերենով: Օտար լեզուներով կրթական ծրագրերի մշակումը և ներդրումը հնարավորություն կտա բարձրագույն կրթությունը հասանելի դարձնել օտարերկրյա ուսանողներին: Ավելին՝ այն հնարավորություն կտա ինտեգրել օտարերկրյա ուսանողներին կրթական գործընթացներին և խթանել հայ ուսանողների միջմշակութային հաղորդակցության հմտությունները:

Օտար լեզուներով դասընթացների ներդրումը ուղղակիորեն պահանջում է համապատասխան լեզուներին տիրապետող դասախոսական կազմ: Այս առումով կարևոր նշանակություն ունի բուհերում լեզուների իմացությունը խրախուսող համակարգի և մասնագիտական զարգացման ծրագրերի ներդնումը:

Խնդիր 1.4 Բարելավել բուհերի ակադեմիական և վարչական աշխատակազմի ներգրավվածությունը միջազգայնացման գործընթացներում

Բոլոնյան գործընթացին միանալուց հետո բուհերը հայտնվեցին անորոշ վիճակում՝ կրթական բարեփոխումների վերաբերյալ ազգային մակարդակով համապատասխան ուղենիշներ սահմանված չլինելու պատճառով: Նոր միջավայրը պարտադրում է ունենալ ժամանակի պահանջներին համապատասխան հմտություններով և կարողություններով զինված ներուժ ինստիտուցիոնալ մակարդակում միջազգայնացման խնդիրները լուծելու համար: Սակայն բուհերի կառուցվածքային, ինչպես նաև առանձին կառույցների գործառույթների փոփոխությունները միայն մասամբ են արձագանքում բուհերի միջազգայնացման և գրավչության բարձրացման մարտահրավերներին:

Ներկայումս բուհերի միջազգայնացման գործընթացը հիմնականում ընկալվում է որպես միջազգային համագործակցության բաժինների գործառույթ և պատասխանատվություն: Եվ եթե վերջիններս կոչված են համակարգելու միջազգայնացմանը միտված ընդհանուր աշխատանքները, կարևոր է, որ միջազգայնացման գերակայությունը արտահայտված լինի բուհի գործունեության տարբեր շերտերում՝ դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի փոխլրացնող աշխատանքներում: Համակողմանի միջազգայնացումը և դրա համակարգումը ենթադրում է ղեկավարության առաջնորդություն և աջակցություն, կենտրոնացված կառուցվածքների զուգակցում ապակենտրոնացված կառույցների հետ, կրթական ծրագրերի բարելավում և միջազգային չափայնության ներմուծում, ներքին կանոնակարգերի առկայություն, անձնակազմի և ուսանողների շարժունություն և միջազգային համագործակցություն:

Նպատակ 2. Խթանել բարձրագույն կրթական ծրագրերի և հետազոտության մրցունակությունը միջազգային մակարդակում

Անհնարին է դիտարկել բարձրագույն կրթության միջազգայնացումը առանց բաձրորակ և միջազգայնորեն մրցունակ կրթական և հետազոտական ծրագրերի: Հիմնվելով կրթության իր բազմադարյա ավանդույթների վրա՝ Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները դառնալու գիտելիքի թիրախային կենտրոն: Սակայն այդ ցանկալի որակը անհնար է ապահովել կրթության և հետազոտության միջև ներկայիս թույլ կապի, գլոբալ գործընկերությունների բացակայության և հետազոտությունների արդյունքների նկատմամբ սահմանափակ հետաքրքրվածության պայմաններում:

Կրթության և հետազոտության միջև այդ կապի ուժեղացման, որակի բարձրացման և միջազգային համագործակցության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև տնտեսության զարգացման տեղական և գլոբալ մարտահրավերներին նորարարական լուծումներ տալու հրամայականով: Հետևաբար, «բարձրագույն կրթություն–հետազոտություն-նորարարություն» եռանկյունու ապահովման և միջազգային մակարդակում մրցունակության բարձրացման համար լուծումներ են անհրաժեշտ հետևյալ ուղղություններով՝ բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների ձևավորում և պահպանում, առկա ենթակառուցվածքների արդիականացում և արդյունավետ կառավարում, հետազոտական աշխատանքների գնահատման և կարևորման նոր

մոդելների ստեղծում: Միայն վերոնշյալ խնդիրների լուծման պարագայում հնարավոր կլինի բարձրացնել բարձրագույն կրթության և հետազոտության մրցունակությունը միջազգային մակարդակում և դառնալ գիտելիքաստեղծ կենտրոն:

Խնդիր 2.1 Ապահովել բարձրագույն կրթության և հետազոտության որակը

Հայաստանի անկախացումից ի վեր բարձրագույն կրթության ոլորտում իրականացված բարեփոխումները հիմնականում միտված են եղել կառուցաձևերի և ենթակառուցվածքների ստեղծմանը՝ սահմանափակ անդրադարձ ունենալով բովանդակությանը և գիտելիքի զարգացման ու փոխանցման մեթոդներին: Այսօր անհրաժեշտ են բովանդակությանն անդրադարձ կատարող բարեփոխումներ՝ մասնավորապես կրթության բովանդակության և ուսումնառության վերջնարդյունքների ներդաշնակեցում, դասավանդման արդիական, ուսանողակենտրոն, ակտիվ երկխոսության վրա հիմնված ժամանակակից, հետաքրքիր մեթոդների և առցանց միջոցների կիրառում:

Կրթության և հետազոտության որակի բարձրացման, հետազոտությունը բարձրագույն կրթության ինտեգրված մաս դարձնելու նպատակով շեշտադրումը նաև պետք է լինի բարձրորակ կադրերի հավաքագրման, նրանց արդյունավետ աշխատանքի խրախուսման և միջազգային մակարդակով համագործակցային ցանցեր ստեղծելու վրա՝ օգտագործելով միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության դեսպանատների, սփյուռքի հնարավորությունները:

Կարևոր է նաև բարձրագույն կրթության երրորդ մակարդակի ծրագրերի վերանայումը և ներդաշնակեցումը եվրոպական առաջատար բուհերի կողմից իրականացվող դոկտորական ծրագրերին, քանզի այս խնդրի լուծմամբ հնարավոր կլինի ապահովել այն մտավոր և հետազոտական ռեսուրսը, որը կդառնա նորարար և գիտելիքահեն տնտեսության զարգացման և միջազգային մակարդակի վրա մրցունակության մղիչ ուժը: Ուստի, անհրաժեշտ է նաև վերանայել ասպիրանտական կրթությունը՝ Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրվելու համար սահմանված չափանիշներին, Զալցբուրգյան և նորարարական դոկտորական կրթության սկզբունքներին համահունչ:

Ինստիտուցիոնալ մակարդակում բարեփոխումները խթանելու և որակական փոփոխությունների արդյունքներն ամրապնդելու համար նաև անհրաժեշտ է բարելավել հավատարմագրման և լիցենզավորման չափանիշներն ու մեխանիզմները, ինչպես նաև ներդնել հաշվետվողականության մեխանիզմներ:

Կրթության որակը խթանող և բուհերում միջազգայնացման մշակույթ ստեղծող կարևորագույն նախադրյալներից է նաև համատեղ կրթական ծրագրերի ներդրումը: Այսօր հայաստանյան տարբեր բուհերում իրականացվում են շուրջ 50 համատեղ կրթական ծրագրեր, որոնց արդյունքում շնորհվում են հիմնականում երկու կամ ավելի դիպլոմներ կրթական ծրագիրն իրականացնող բուհերի կողմից: Սակայն համատեղ կրթական ծրագրերի իրագործումը բախվում է նաև խոչընդոտների իրավական, ինստիտուցիոնալ կարողությունների և ռեսուրսների ապահովվածության տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ է համապարփակ բարեփոխումների իրագործում համատեղ կրթական ծրագրերի խթանման ուղղությամբ: Համատեղ ծրագրերի ներդրումը հնարավորություն կտա ապահովելու ուսումնառության և դասավանդման արդիականությունը միջազգային լավագույն փորձի, նորարարական մեթոդների կիրառման միջոցով և կնպաստի բարձրագույն կրթության և հետազոտության շարունակական ինտեգրմանը միջազգային

կրթական համակարգին՝ խթանելով օտարերկրյա բուհերի հետ համատեղ որակավորումների շնորհումը, ուսանողների ու աշխատակազմի շարժունության բարձրացումը:

Օտար լեզուներով համատեղ կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը կդյուրացնի նաև համատեղ և կրկնակի դիպլոմով կրթական ծրագրերի առաջադրումը, ինչպես նաև կհանգեցնի միջազգային գործընկերային կապերի ընդլայնմանը՝ նվազագույնի հասցնելով հնարավոր սահմանափակող արգելքները:

Հայաստանյան բուհերում կրթության և հետազոտության որակը բարձրացնելու, միջազգայնացումը խթանելու համար կարևոր է բարձր մասնագիտական ներուժի ներգրավումը և պահպանումը: Վերջին տարիների զարգացումները ցույց են տվել, որ վարձատրության ցածր պայմանների պատճառով, դասախոսները և վարչական աշխատակազմը ներգրավված են մեկից ավելի աշխատանքներում: Դա բացասաբար է անդրադառնում գիտակրթական գործունեության արդյունավետության և դրա միջազգայնացման վրա: Սակայն ֆինանսական միջոցների սակավությունը միակ խնդիրը չէ ստեղծագործ և տաղանդավոր ներուժի ներգրավման և պահպանման հարցում: Բուհերում առկա չեն որակյալ շրջանավարտների պահպանման և գիտակրթական գործընթացներում նրանց ներգրավման, երկրում և երկրից դուրս, մասնավորապես Սփյուռքում առկա մասնագիտական ներուժի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր: Բարոյական և ֆինանսական խրախուսման համակարգը անբավարար է, և թույլ չի տալիս վերհանել բարձր կարողություններով մասնագետների ներուժը և ուղղորդել բուհի զարգացման խնդիրների իրագործմանը:

Ստեղծագործ և տաղանդավոր ներուժի ներգրավումը և պահպանումը ենթադրում է նաև համապատասխան ենթակառուցվածքների, աջակցող ծառայությունների և հետազոտական հնարավորությունների, ինչպես նաև փոփոխություն իրականացնելու ոգեշնչող միջավայրի առկայություն: Ուստի այս խնդրի իրագործումն ապահովելու համար հայաստանյան բուհերը պետք է մշակեն քաղաքականություն և ընթացակարգեր համապատասխան մասնագիտական և հետազոտական ներուժի ներգրավման և պահպանման համար: Ավելին՝ բուհերը պետք է ստեղծեն լուրջ կրթական և հետազոտական արժեքահեն միջավայր, որը կխրախուսի որակյալ և միջազգայնորեն մրցունակ կրթության տրամադրումը և հետազոտության իրագործումը: Այս ուղղությամբ կարևոր է նաև կարիերայի զարգացմանն աջակցելու և առաջխաղացումն ապահովելու քաղաքականությունը, որը կստեղծի գրավիչ միջավայր որակյալ մասնագետների ներգրավվածությունը մոտիվացնելու համար:

Խնդիր 2.2 Ուղղորդել բուհերի միջազգայնացումը երկրի զարգացման համար գերակա նշանակություն ունեցող ոլորտներ

Չնայած վերջին տասնամյակում միջազգային կապերի հաստատմանը միտված առավել ակտիվ ջանքերին՝ իրականացված ծրագրերը և շարժունությունը ոչ միշտ են բխել երկրի զարգացման առաջնահերթություններից:

Ներկայումս, երբ թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանը կանգնած է տնտեսական և քաղաքական արմատական բարեփոխումների առջև, բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացումը, իր բոլոր հնարավոր ուղղություններով, կարող է գործուն լծակ դառնալ այդ գործընթացում համաշխարհային առաջավոր փորձի ներմուծման համար: Այսպես, օրինակ, միջազգային մակարդակում միջինստիտուցիոնալ համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների, տուրիզմի,

գյուղատնտեսության և զարգացման այլ գերակա ոլորտներում կապահովի համապատասխան մասնագիտական ներուժի առաջանցիկ զարգացումը, տնտեսության բարելավումը և մրցունակության բարձրացումը միջազգային մակարդակում:

Նպատակ 3. Բարձրացնել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգային տեսանելիությունը և գրավչությունը

Չնայած բուհերի կողմից ներդրված որոշ ջանքերին, չի ձևավորվել տեղեկատվության տարածման համապարփակ քաղաքականություն, որը կնպաստեր հայաստանյան բարձրագույն կրթության գրավչության և տեսանելիության բարձրացմանը միջազգային մակարդակում: Բուհական համակարգի միջազգային տեսանելիության բարձրացման ուղղությամբ համալիր գործողությունների իրագործումը հնարավորություն կտա խթանելու օտարերկրյա ուսանողների և դասախոսների ներգրավումը հայաստանյան բուհերում, միջազգային ռազմավարական գործընկերությունների հաստատումը և միջազգային մակարդակում մրցունակության ապահովման ձգտումները:

Այն կնպաստի Հայաստանի բարձրագույն կրթության միջազգային վարկանիշի բարձրացմանը՝ աջակցելով միջազգային շարժունությանն ու ECTS-ի վրա հիմնված կրեդիտային համակարգի արմատավորմանը, միջազգային մակարդակում գիտելիքի և փորձի փոխանակմանը, միջմշակութային երկխոսության հետագա ակտիվացմանը, ԵԲԿՏ-ին և ԵՀՏ-ին ինտեգրմանը: Օտարերկրյա բուհերի հետ համատեղ ծրագրերի և հետազոտությունների միջոցով Հայաստանը կարող է ուժեղացնել ու զարգացնել իր վարկանիշը որպես գիտելիքի միջազգայնորեն ճանաչված և գրավիչ կենտրոն:

Խնդիր 3.1 Ներգրավել այլ երկրներում ապրող շրջանավարտների, օտարերկրյա բուհերն ավարտած հայազգի շրջանավարտների, օտարերկրյա դասախոսների և Սփյուռքի ներկայացուցիչների ներուժը բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման գործընթացում

Շատ բուհերում ուղղորդված աշխատանքներ չեն իրականացվում նաև բուհերի շրջանավարտների հետ, որոնք բուհի վերաբերյալ տեղեկատվության տարածման կարևորագույն օղակներ են: Այսօր հայաստանյան բուհերի շրջանավարտների մի ստվար զանգված ուսումնառում կամ աշխատում է արտասահմանում, սակայն չկա տվյալների հավաքագրման գործուն համակարգ շրջանավարտների հետ համագործակցելու և իրենց միջոցով բուհի տեսանելիությունը այլ երկրներում բարձրացնելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, հատկապես վերջին երկու տասնամյակներում մեծ թվով օտարերկրյա դասախոսներ են եկել Հայաստան և դասավանդել տարբեր ծրագրերում: Նրանք կարող են կարևոր դեր խաղալ հայաստանյան բուհերի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու և իրենց բուհերի հետ միջազգային կապեր հաստատելու ուղղությամբ:

Հայաստանի բուհական համակարգի տեսանելիության և գրավչության բարձրացման գործում կարևորագույն ներուժ է Սփյուռքը: Այսօր օտարերկրյա առաջատար բուհերում աշխատում են Սփյուռքի ներկայացուցիչներ, որոնց հետ համագործակցությունը ցանկալի մակարդակի վրա չէ:

Ուստի անհրաժեշտ են համալիր գործողություններ բուհի շրջանավարտների հետ կապի պահպանման, Սփյուռքի ներկայացուցիչների և օտարերկրյա բուհերի ակադեմիական կազմի հետ կապերի հաստատման և գիտակրթական գործընթացներում նրանց ներգրավման ուղղությամբ:

Խնդիր 3.2 Ներդնել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգային խթանման մարքեթինգային հայեցակարգ

Առայսօր, բուհական համակարգը չունի այն ներկայացնող մարքեթինգային հաղորդակցության (տեսահոլովակներ, ցուցահանդեսներ, համաժողովներ, գովազդ և այլն) արդյունավետ գործողությունների իրականացման համալիր քաղաքականություն և ծրագրեր: Բուհերում մարքեթինգային միջոցառումներին հատկացվող ֆինանսական միջոցները սակավ են, ինչը չի նպաստում համակարգի և բուհերի ներկայացմանը այլ հարթակներում:

Անհրաժեշտ է մշակել և ներդնել մարքեթինգային համապարփակ ռազմավարություն թե՛ ազգային, և թե՛ ինստիտուցիոնալ մակարդակներում՝ ներգրավելով փորձագետ մասնագետների: Միաժամանակ, մատուցվող ծառայությունների, գործունեության վերաբերյալ տեղեկատվության լիարժեք ներկայացման, ինչպես նաև շահառուների հետ հետադարձ կապի ամրապնդման նպատակով բուհերը պետք է ընդլայնեն մարքեթինգային բազմազան գործիքների օգտագործումը՝ ապահովելով ինտերնետային կայքերի դինամիկ զարգացումը և լավագույնս օգտագործելով սոցիալական ցանցերի հնարավորությունները:

Խնդիր 3.3 Ապահովել միջազգային վարկանիշավորման համակարգերում բուհերի ընդգրկումը

Համալսարանների տեսանելիության բարձրացման համար կենսական նշանակություն ունի հայաստանյան բուհերի ներգրավումը միջազգային վարկանիշավորման համակարգերում:

Հայաստանյան բուհերի մեծ մասը ներկայացված չէ միջազգայնորեն ճանաչելի վարկանիշավորման համակարգերում: Միայն վերջերս, «QS Emerging Europe and Central Asia University Rankings» համակարգի 2018 թվականի համար հրապարակված ցուցակում առաջին անգամ հայաստանյան 2 բուհեր են ընդգրկվել: Երևանի պետական համալսարանը զբաղեցրել է 181-190-րդ, իսկ Հայ-ռուսական համալսարանը՝ 201-250-րդ հորիզոնականների միջակայքը:

Հայաստանում դեռևս 2012 թվականի գերակա խնդիրներից է եղել բուհերի վարկանիշավորման համակարգի մշակումը: Նախատեսվել էր մինչև 2012 թվականի ավարտը մշակել բուհի ներքին և արտաքին գործունեությունը նկարագրող թափանցիկ և դյուրընթեռնելի դասակարգման և աստիճանակարգման ցուցիչներ, նրա գործունեության գնահատման թափանցիկ ու հուսալի չափանիշներ, մեթոդաբանություն և կանոնակարգեր: Սակայն 2013թ. մեկնարկած վարկանիշավորումը չլուծեց միջազգային մակարդակում Հայաստանի բուհական համակարգի տեսանելիության և գրավչության բարձրացման խնդիրը, և համակարգում առկա այլ հարցերի պատճառով այն չկայացավ: Սույն ռազմավարության խնդիրներից է նաև մշակել գործողությունների ծրագրեր, որոնք կբխեն միջազգային վարկանիշավորման համակարգերում ընդգրկվելու համար նախատեսված ցուցանիշներից՝ բուհերի միջազգային տեսանելիության բարձրացման գործընթացներն ուղղորդելու համար:

Նպատակ 4. Ընդլայնել ուսանողների, դասախոսական և վարչական աշխատակազմի միջազգային շարժունությունը

Գլոբալիզացիայի և ԵՄ մի շարք ծրագրերի արդյունքում վերջին տարիներին աճել է ուսանողների և անձնակազմի միջազգային շարժունությունը: Միջազգային

շարժունության աճը կարևոր նախադրյալ է հայկական կրթական համակարգի միջազգայնացման, առաջավոր փորձի փոխանակման, կրթության որակի և մրցունակության բարձրացման համար: Հայաստանում որակյալ կրթություն ստացած օտարերկրյա ուսանողները կարող են դառնալ դեսպաններ՝ խթանելով Հայաստանի և այլ երկրների միջև միջազգային, սոցիալ-տնտեսական և մշակութային կապերը:

Խնդիր 4.1 Ավելացնել դասախոսական և վարչական աշխատակազմի փորձի փոխանակման և մասնագիտական զարգացման հնարավորությունները, ընդլայնել ուսանողների շարժունությունը կարճաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրերում

Շարժունությունը բազմաթիվ հնարավորություններ է ստեղծում ինչպես անհատական զարգացման համար, այնպես էլ խթանում է անհատների և բուհերի միջև միջազգային համագործակցությունը, նպաստում բարձրագույն կրթության և հետազոտության որակի բարձրացմանը: Շարժունությունը հնարավորություն է տալիս ընդլայնելու մասնակիցների գիտելիքի և փորձառության սահմանները, ինչպես նաև ձևավորելու միջմշակութային հաղորդակցության, անծանոթ իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու հմտություններ:

Հայաստանում իրականացված տարբեր ծրագրերի շրջանակում (Erasmus+, DAAD, IREX, Fullbright և այլն) գրեթե բոլոր բուհերի դասախոսական և վարչական անձնակազմը տարբեր հնարավորություններ է ունեցել մասնակցելու շարժունության ծրագրերին և ծանոթանալու միջազգային փորձին: Սակայն շարժունության ներկա ծավալները փոքր են և չեն նպաստում բուհի տարբեր ստորաբաժանումների և ֆակուլտետների միջազգայնացմանը: Ուստի բուհերը պետք է մշակեն ռազմավարություն և ընթացակարգեր շարժունության հնարավորություններն ընդլայնելու, դրանք ըստ բուհի ռազմավարական խնդիրների ուղղորդելու, մասնագիտական ուղղությունները բազմազանեցնելու ուղղությամբ: Շարժունության ընդգրկումը մեծացնելու և մասնակիցների քանակն ավելացնելու համար, բուհերը պետք է մշակեն նաև տեղեկատվության տարածման և անձնակազմի հետ արդյունավետ հաղորդակցության ապահովման մեխանիզմներ, ինչպես նաև, շարժունության արդյունքների գնահատման և արժևորման գործիքներ:

Ներկայումս ԿԳՄՍ նախարարության և բուհերի կողմից առաջարկվում են թե՛ աստիճանային շարժունության ծրագրեր՝ միջպետական կամ երկկողմ համաձայնագրերի շրջանակներում, թե՛ կարճաժամկետ ու երկարաժամկետ՝ հիմնականում Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում:

Վերջին տարիների ուսանողական շարժունության դինամիկան գրանցել է դրական միտումներ: Այդուհանդերձ 2017-2018թթ. ուսումնական տարում այն կազմել է ընդհանուր ուսանողական համակազմի ընդամենը 1%-ը: Շարժունության ծավալների փոքրաթիվ լինելու հետ մեկտեղ առկա են նաև խնդիրներ օտարերկրյա բուհերում ձեռքբերած կրթության ճանաչման և ECTS կրեդիտների փոխանցման հետ: Վերջինս պայմանավորված է թե՛ ECTS կրեդիտների ոչ ամբողջական գործարկման և ուսումնառության վերջնարդյունքների հետ փոխկապակցվածության բացակայությամբ, թե՛ հայաստանյան բուհերի կրթական ծրագրերի խիստ կանոնակարգվածությամբ:

Ուստի անհրաժեշտ են համալիր գործողություններ ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում՝ ուսանողական շարժունությունը խթանելու համար: Մասնավորապես անհրաժեշտ է ուժեղացնել երկխոսությունը Հայաստանի պետական կառույցների և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև տարբեր

գերատեսչությունների միջև՝ մուտքի արտոնագրերի, աշխատանքային իրավունքի և ժամանակավոր կացության թույլտվությունների, օտարերկրյա բուհերում ստացած կրթության ճանաչման հետ կապված խոչընդոտները վերացնելու համար:

Հայաստանյան բուհերի կողմից առաջարկվող կրթական ծրագրերը պետք է կառուցված լինեն այնպես, որ հնարավորություն ընձեռեն ուսանողներին իրենց ուսման ընթացքում գոնե մեկ անգամ մասնակցելու շարժունության տարբեր ծրագրերի: Շարժունությունը պետք է հասանելի լինի բոլոր ուսանողների համար և ամրագրվի բուհերի ռազմավարական զարգացման ծրագրերում: Համաձայն ԵՄ «2020 շարժունության ռազմավարության»՝ ԵԲԿՏ երկրները մինչև 2025թ. պետք է ձգտեն ավելացնել շարժունության ընդհանուր ազգային ցուցանիշը՝ հասցնելով այն ընդհանուր ուսանողական համակազմի 20%-ի: Ուստի սույն ռազմավարությամբ կարևորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նմանօրինակ թիրախային սահմանաչափի սահմանումը և անհրաժեշտ գործիքակազմի ներդրումը հայաստանյան բուհերին անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ բուհերը պետք է իրականացնեն ռազմավարական քանակական թիրախավորում՝ ազգային մակարդակում սահմանված սահմանաչափն ապահովելու համար: Այդ ուղղությամբ աշխատանքներ պետք է իրականացվեն նաև ուսանողների շրջանում տեղեկատվությունը տարածելու և ուսանողների համար հավասար պայմաններ ապահովելու ուղղությամբ:

Սույն ռազմավարությունը նախատեսում է ստեղծել շարժունությանը նպաստող բարենպաստ միջավայր բոլոր շահակիցների ներգրավվածությամբ և համագործակցությամբ: Մասնավորապես նախատեսվում է ուժեղացնել Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի համագործակցությունը բուհերի հետ՝ խորհրդատվություն տրամադրելու և թեմատիկ վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնն իր հավատարմագրման չափանիշներում պետք է դիտարկի շարժունության արդյունքների ճանաչման, շարժունության մասնակցության ընթացակարգերի, թափանցիկության և հավասար հնարավորությունների վերաբերյալ ցուցանիշների ներառում:

Անկախացումից ի վեր օտարերկրյա ուսանողների ներգրավումը եղել է տարերային, և մարքեթինգային աշխատանքներ չեն տարվել՝ թիրախավորելու հստակ երկրներ: Առանձին դեպքերում, մասնագիտության առանձնահատկություններից ելնելով, որոշ բուհեր թիրախավորել են մի քանի երկրներ, սակայն դա համընդհանուր բնույթ չի կրել: Ելնելով արդեն ձևավորված շարժունության միտումներից՝ մի կողմից, և երկրի արտաքին հարաբերությունների զարգացման առաջնահերթություններից՝ մյուս կողմից, անհրաժեշտ է սահմանել ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող երկրները և մշակել համապատասխան ռազմավարություն՝ խթանելու և զարգացնելու շարժունությունը/համագործակցությունը թիրախային երկրների բուհերի ու գործընկերների հետ:

Այսօր բուհերի միջազգայնացման, շարժունության ծավալների, տեսակների և ուղղությունների վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական չէ, իսկ դրա հավաքագրման մեխանիզմը՝ անկատար: Հավաստի տվյալների բազայի բացակայությունը թույլ չի տալիս իրականացնել փաստարկված քաղաքականություն բարձրագույն կրթության միջազգայնացման ուղղությամբ և ուղղորդել հայաստանյան բուհերին միջազգայնացման ռազմավարական թիրախավորումներ կատարելու հարցում: Միջազգային շարժունության վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազա

ունենալու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև շարժունության ազդեցության գնահատման կարևորությամբ և դրանից բխող բարելավման միջոցառումների իրականացմամբ՝ խթանելու շարժունության ծրագրերի մեջ նրանց ակտիվ մասնակցությունը:

Տեղեկատվական բազայի առկայությունը կծառայի նաև հավատարմագրման գործընթացների ու բուհի հաշվետվողականության բարձրացման նպատակներին, ինչպես նաև տարբեր կառույցներին վիճակագրական տվյալների ներկայացմանը:

Խնդիր 4.2 Ներդնել օտարերկրյա որակավորումների, գիտական կոչումների, կրեդիտների ճանաչման համակարգ

Ակադեմիական շարժունության թվի աճի հետ մեկտեղ անհրաժեշտ է բուհերում մշակել օտարերկրյա որակավորումների և նախընթաց կրթության ճանաչման ընթացակարգեր՝ հիմնված Լիսաբոնի՝ բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման կոնվենցիայի հիմնական սկզբունքների վրա: Շարժունության աճի հետ զուգընթաց մեծանում է նաև բուհերի պատասխանատվությունը օտարերկրյա պետությունում ստացած կրթության կամ որակավորման գնահատման հարցերում: Ուստի կրթության ոլորտի գործող օրենսդրական դաշտը, ինչպես նաև բուհերի ընդունելության կարգերը պետք է համահունչ լինեն կոնվենցիայի հիմնական սկզբունքներին՝ հարգելով բուհերի ինքնավարությունը և ակադեմիական ազատությունները:

Որակավորումների անաչառ ճանաչումը հնարավորություն կտա պահպանելու ստացված որակավորման իրական արժեքը հետագայում ուսումը շարունակելու կամ աշխատանքի անցնելու նպատակով: Ճանաչման ընթացակարգերը պետք է հնարավորություն տան ճանաչելու նաև կրեդիտային/կարճատև շարժունության արդյունքները:

Այսպիսով, բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացումը պահանջում է համապարփակ մոտեցումներ: Անհրաժեշտ է ունենալ բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակ՝ տեղադրելով համապատասխան գործիքակազմ և բենչմարքինգի ցուցիչներ, ինչպես նաև ռազմավարական նպատակների իրագործման մշտադիտարկման, գնահատման ընթացակարգեր: Մշտադիտարկման և հաշվետվողականության համակարգի մշակումը հնարավորություն կտա գնահատելու բուհերի միջազգայնացման տեմպերը և ուղղությունները, իրականացվող միջոցառումների արդյունավետությունը՝ ըստ բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության վրա ունեցած ազդեցության:

Օտարալեզու բառեր և հապավումներ.

DAAD – Գերմանական ակադեմիական փոխանակման գործակալություն (https://www.daad.de/en/, https://www.daad.am/hy/),

ECTS – Եվրոպական կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգ (ԵԿՓՀ) (https://ec.europa.eu/education/resources-and-tools/european-credit-transfer-and-accumulation-system-ects_en):

Erasmus+ – Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագիր, որի համակարգողը Կրթության, աուդիովիզուալ և մշակույթային գործադիր գործակալությունն է (https://eacea.ec.europa.eu/erasmus-plus, https://erasmusplus.am/),

Fullbright – ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվող կրթական և մշակույթային փոխանակման ծրագիր (https://www.cies.org/, https://am.usembassy.gov/education-culture/fulbright-program/),

IREX – Միջազգային հետազոտությունների և փոխանակման կազմակերպություն, ԱՄՆ (https://www.irex.org/, https://www.irex.org/region/europe-eurasia/armenia):